

ՍԱՂՄՈՍ 96

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԻՐՈՋԸ՝ արդար Դատավորին երկրպագելու կոչ <u>MT ներածություն</u> <u>չկա</u>	Դատաստանով եկող Աստծուն ուղղված փառա- բանության երգ	Աստծո թագավո- րությունը մեծարող օրհներգ	Աստված գերագույն Թագավոր	Յահվեն՝ Թագավոր և Դատավոր
96:1-6	96:1-3 96:4-6	96:1-6	96:1-3 96:4-6	96:1-2ա 96:2բ-3 96:4-5ա 96:5բ-6
96:7-10	96:7-9 96:10	96:7-9 96:10-13	96:7-9 96:10-13	96:7-8ա 96:8բ-9 96:10
96:11-13	96:11-13			96:11-12 96:13

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՄԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սա չափազանց ոգևորիչ և կարևոր Մաղմոս է: Այն զարգացնում է միաստվածության տիեզերական նշանակությունը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ): Այն նաև զարգացնում է միաստվածության էթիկական կողմի եթատեքստը (այսինքն՝ արդարության և արդարադատության աշխարհ): Սա կարող է արտացոլել էսկատոլոգիական դատաստանի տեսարան, ինչպես օրինակ Մատթ. 25:31-46 և Հայտն. 20:11-15:

Բ. Այս Սաղմոսն ունի էսկատոլոգիական նշանակություն: Ամբողջ աշխարհը (տես՝ Սաղմ. 96:1,3,7,9,10,13) մի օր ճանաչելու է ՅԱՀՎԵԻ գերակայությունը. «ՅԱՀՎԵՆ է թագավորում» (տես՝ Եսայի 52):

Գ. Այս Սաղմոսը մեջվերված է 1 Մնաց. 16:23-33-ում որպես ավելի մեծ Սաղմոսի մի մաս՝ Դավթի կողմից Ուխտի տապանակը Երուսաղեմ բերելու հետ կապված: Համատեքստում Դավթի (LXX), Ասափը կամ նրա ընտանիքը կարող էին լինել մարդ հեղինակը: MT չունի ներածական արտահայտություն:

Դ. Այս Սաղմոսն արտացոլում է տիեզերական երկրպագության միջավայր բոլոր ժողովուրդներին, որտեղ միակ Աստծո առանձնահատկությունները (այսինքն՝ որպես Թագավար և Դատավոր) և գործերն են փառաբանվում: Սա տաճարի արտաքին գավթի նպատակն էր (տես՝ 3 Թագ. 8:43, 60, Եսայի 56:7, Մատթ. 21:13, Մարկոս 11:17):

Ե. Այս Սաղմոսը բավականաչափ ընդհանուր է, որպեսզի համապատասխանի ՅԱՀՎԵԻ մի քանի այցելություններին: «Նոր երգը» խոսում է Աստծո փրկագործության շարունակականության մասին, ոչ միայն Իսրայելի համար, այլ բոլոր մարդկանց: Նրա փրկությունը տիեզերական է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Չ. Չնայած որ չկա հատուկ մեխիական խոսք, հետագա հայտնությունից ակնհայտ է, որ այս տիեզերական փրկագործության և թագավորության իրականացման մեխանիզմը Մեսիան է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵՄԻՎ):

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 96:1-6

¹Նոր երգ երգեցե՛ք ՏԻՐՈՉԸ,

Երգեցե՛ք ՏԻՐՈՉԸ, ամբողջ երկիրը:

²Երգեցե՛ք Տիրոջը, օրհնեցե՛ք Նրա՝ անունը,

Օրեցօր Նրա փրկությունը ավետեցե՛ք:

³Նրա փառքը հռչակեցե՛ք հեթանոսների մեջ

Ու Նրա հրաշքները՝ բոլոր ժողովուրդների մեջ,

⁴Քանի որ ՏԵՐԸ մեծ է ու մեծապես պետք է փառաբանվի:

Նա բոլոր աստվածներից ահարկու է:

⁵Քանի որ ազգերի բոլոր աստվածները կուռքեր են,

Բայց ՏԵՐՆ ստեղծեց երկինքը:

⁶Փառք ու մեծություն կա նրա առջև,

Չորություն ու գեղեցկություն՝ Նրա սրբարանում:

96:1 «Երգեցե՛ք ՏԻՐՈՉԸ» Սա շեշտադրության համար երեք անգամ կրկնվող ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է (նաև Սաղմ. 96:7-8-ում. սա գրական կերպ էր երրայերենի գերադրական աստիճանի ածական կազմելու համար, տես՝ Եսայի 6:3, կամ ընդգծելու՝ շեշտադրելու համար բանաստեղծական կերպ էր, տես՝ Սաղմ. 103:10,21,22, 118:2,3,4, 135:1, 136:1,2,3, Երեմ. 7:4, 22:29): ՅԱՀՎԵԻ կամքն է, որ «ամբողջ երկիրը» երգի և օրհնի Նրան: Իսրայելի գործն է ՅԱՀՎԵԻ բնավորությունը և գործերը աշխարհին հայտնի դարձնելը: Ամբողջ ստեղծագործությունը փառաբանելու է Նրան (տես՝ Սաղմ. 96:11-12, 103:19-22, 145:10):

❖ **«նոր երգ»** Այս արտահայտությունը հաճախ է կիրառվում Աստվածաշնչում (տես՝ Սաղմ. 33:3, 40:3, 98:1, 144:9, Եսայի 42:10, Հայտն. 5:9, 14:3): Աստված միշտ նոր փրկագործություն է անում Իր մարդ արարածների համար: Սա կարծես թե վերաբերում է բոլոր ազգերի փրկության համար Նրա գալստյանը (տես՝ Սաղմ. 96:13):

«Նոր» բառը (BDB 294 I, տես՝ Սաղմ. 33:3, 40:3, 90:1, 98:1, 144:9, 149:1) հաճախ կիրառվում է Եսայի մարգարեության մեջ՝ ցույց տալով ՅԱՀՎԵԻ արարող նոր գործունեությունը: «Նոր» իրոք հենց այն է, ինչ ՅԱՀՎԵՆ ուզում էր, որ բուն ստեղծագործությունը լիներ: Անկման հետևանքները և ազդեցությունը հետադարձվում են և վերացվում: Աստվածաշնչը սկսվում է Եդեմում (Ծննդոց 1-4) և ավարտվում նոր Եդեմում (Հայտնություն 21-22):

Եսային այս տերմինն օգտագործում է մի քանի բան նկարագրելու համար՝

1. նոր բաներ – Եսայի 42:9, 48:6
2. նոր երգ – Եսայի 42:10 (Հայտն. 5:9, 14:3)
3. ինչ-որ նոր բան – Եսայի 43:19 (Հայտն. 3:12)
4. նոր անուններ – Եսայի 62:2 (Հայտն. 2:17, 3:12)
5. նոր երկինք ու նոր երկիր – Եսայի 65:17, 66:22 (2 Պետ. 3:13, Հայտն. 21:5)

❖ **«ամբողջ երկիր»** Տիեզերական այս թեման դարձյալ ու դարձյալ կրկնվում է այս Սաղմոսում (տես՝ Սաղմ. 96:3,7,10,13): Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈՂ, ԵՐԿԻՐ, ԵՐԿՐԱԳՈՒՄԵՐ: Խնդրում եմ ժամանակ հատկացրե՛ք նայելու ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ: Սա իմ աստվածաբանության ինտեգրացիոն կենտրոնն է:

96:2 «օրհնեցե՛ք Նրա անունը» Սա նույնպես ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է (BDB 138, KB 159, *Piel*): Այս բառի արմատի նշանակությունը երկրպագությանը «ծնկել» է: Հետևաբար սա մատնանշում է պատարագ կամ խոստովանություն տաճարում (տես՝ Սաղմ. 26:12, 100:4, 134:1-2, 135:19-20, Նեեմ. 9:5):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»

❖ **«Նրա փրկությունը ավետեցե՛ք»** Սա ևս մեկ *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է (BDB 142, KB 163): Բարի լուրը հնարավոր է վերաբերում է ՅԱՀՎԵԻ բնավորությանը կամ ազատելու՝ փրկելու Նրա գործերին (տես՝ Եսայի 40:9, 41:27, 52:7, 60:6, Նաում 1:15): Այս համատեքստում սա վերաբերում է ամբողջ երկրի համար ՅԱՀՎԵԻ փրկագործության (Սաղմ. 96:3ա-ի «հռչակել» բառը համազոր է, այն նույնպես *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, BDB 707, KB 765):

❖ **«օրեցօր»** AB տարբերակն այս խոսքի շուրջ մի հետաքրքիր կարծիք է ներկայացնում՝

1. հավանաբար օ՝ – ծով, իսկ օ՝ – օր միանման են արտասանվում փյունիկերենում (էջ՝ 357):
2. ծովից ծով (տես՝ Սաղմ. 72:8, Չաբ. 9:10) համապատասխանում է այս Սաղմոսի տիեզերական բնույթին (էջ՝ 357):

Նաև պետք է նշել, որ «ծովեր» խոսքը ակնարկվում է Սաղմ. 96:11-ում:

❖ **«փրկություն»** ՀԿ-ում սա (BDB 447) վերաբերում է ֆիզիկական ազատագրմանը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀԿ)), սակայն ՆԿ-ում իմաստը փոխվում է հոգևոր ազատության (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՎՈՎՈՂ ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ): Այս էսկատոլոգիական Սաղմոսը միաձուլում է երկու ուխտերը և կապում է դրանց երկու կողմերը:

96:3 «փառք» Այս տերմինը կիրառվում է Սաղմ. 96:3,7,8-ում: ՀԿ-ում այն ունի ընդարձակ իմաստային դաշտ: Այն բխել է առևտրային բառապաշարից՝ «ժանր լինել» (այսինքն՝ գործածվում էր կշռի մեջ), ինչպես թանկարժեք մետաղի դեպքում: Այն կիրառվում է՝

1. ՅԱՀՎԵԻ անվան համար – Սաղմ. 29:2, 66:2, 96:8
2. ՅԱՀՎԵԻ անձի համար – Ելից 24:16-17, 33:18,22, 40:34-35, Թվոց 14:22
3. ՅԱՀՎԵԻ գործերի համար – Ելից 16:7,12

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓԱՌՔ (kabod, ՀԿ)

❖ «Նրա հրաշքները» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՔԱՆՉԵԼԻ ԲԱՆԵՐ

96:4 «մեծապես պետք է փառաբանվի» Սա նույնն է ինչ Սաղմ. 48:1: Այս երկուսը կարծես թե չեն համապատասխանում իրար, չնայած երկուսն էլ արտացոլում են պատշաճ վերաբերմունք Աստծո հանդեպ: «Վախենալ» (BDB 431, KB 432, *Niphal* ԴԵՐԲԱՅ) նշանակում է ակնածել կամ հարգել:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՎԱԽԵՆԱԼ (ՀԿ)

❖ «բոլոր աստվածներից» Սաղմոս 96:4 և 5 խոսում է «ժողովուրդների *էլիլիմի*» մասին: Եբրայերեն մի բառախաղ կա «աստված»՝ *էլիլիմ* (BDB 43, 96:4) և «կուռքեր»՝ *elilim* (բառացի՝ «թույլ», «ոչնչություն», BDB 47, տես՝ 96:5, NIDOTTE, հատոր 1, էջ՝ 411):

Վաղ եկեղեցու հայրերը կարծում էին, թե ազգերի աստվածները (*էլիլիմ*) ընկած հրեշտակներն էին, սակայն այս համատեքստում հաստատ այն վերաբերում է հեթանոս կուռքերին, մինչդեռ Սաղմ .89:5,7 այն վերաբերում է հրեշտակային խորհրդին (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԵՐԿՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ): *էլիլիմ* տերմինը կարող է վերաբերել՝

1. ՅԱՀՎԵԻՆ (այսինքն՝ Ծննդ. 1:1)
2. մարդկային դատավորներին կամ առաջնորդներին
3. հրեշտակներին

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Գ.

96:5 Ուշադրություն դարձրե՛ք անձնավորված (տես՝ Սաղմ. 23:6) ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻՆ, որոնք կիրառվում են ցույց տալու ՅԱՀՎԵԻ անձնական ներկայությունը:

1. վեհափառություն՝ BDB 217 I, տես՝ 1 Մնաց. 16:27, 29:11, Սաղմ. 104:1, 111:3, 145:5, 148:13, Հոբ 37:22, 40:10, Ամբ. 3:3
2. մեծություն՝ BDB 214, տես՝ 1 Մնաց. 16:27, Սաղմ. 90:16, 104:1, 111:3, 145:5, Հոբ 40:11, Եսայի 2:10, 19, 21
3. գորություն՝ BDB 738, տես՝ 1 Մնաց. 16:27, Հոբ 12:16, Սաղմ. 62:11, 63:2, 68:34, 93:1
4. գեղեցկություն՝ BDB 802, տես՝ 1 Մնաց. 29:11, Սաղմ. 71:8, 89:13, Եսայի 63:12,14,15

Ես սիրում եմ UBS *Ձեռնարկի* այս առաջարկությունը, որ #1 և #2 հանդիսանում են արքայական տերմիններ (տես՝ Սաղմ. 21:5, 45:3), մինչդեռ #3 և #4 կապ ունեն Սաղմ. 8:61-ում Ուխտի Տապանակի հետ (էջ՝ 834): Նկատեք, որ առաջին տողը ավարտվում է «Նրա սրբարանում» խոսքով, որտեղ գտնվում էր տապանակը:

Լավ քննարկման համար տես՝

1. անձնավորումը կամ մարդաբանությունը կիրառված Աստվածաշնչում՝ տես Գ. Բ. Քարիդ, *Աստվածաշնչի լեզուն և պատկերները*, էջ՝ 172-182:
2. Աստվածաշնչում գործածվող առասպելաբանությունը, էջ՝ 219-242
3. վախճանաբանությունը Աստվածաշնչում, էջ՝ 243-271

Այս գիրքը շատ օգտակար է եղել ինձ Աստվածաշնչի գրական նկարագրության հարցում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏԻ ՏԱՊԱՆԱԿԸ

❖ «Նրա սրբարանում» Սա կարող էր վերաբերել թե՛ երկնային տաճարին (տես՝ Ելից 25:8-9) և թե՛ երկրավորին: Երկրավորը պարզապես երկնայինի կրկնօրինակն էր (տես՝ Եբր. 8:5, 9:23): Ա

Մնացորդաց 16-ի գովաբանությունը ակնհայտ կերպով երկրային էր (տես՝ Եբրայեցիների 9-10): Տես Ջոն Հ. Ուոլթնի *Ծննդոցի կորած աշխարհը*. Հնագույն տիեզերաբանություն գիրքը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 96:7-10

⁷ՏԻՐՈՉԸ տվեք, ո՛վ ժողովուրդների տոհմեր,

ՏԻՐՈՉԸ տվեք փառք ու զորություն:

⁸ՏԻՐՈՉԸ տվեք Իր անվան փառքը,

Ընծա՛ր բերեք ու մտե՛ք Նրա սրահները .

⁹Օ՛, սրբության գեղեցկությամբ պաշտեցե՛ք ՏԻՐՈՉԸ:

Վախեցի՛ր Նրա առաջ, ո՛վ ամբողջ երկիր:

¹⁰Հեթանոսների մեջ ասացե՛ք. «ՏԵՐՆ Է թագավորում .

Աշխարհն էլ հաստատվելու է, որպեսզի չսասանվի .

Նա դատելու է ժողովուրդներին արդարությամբ»:

96:7 «տվե՛ք» Երեք անգամ նմանատիպ կրկնությունը (երեք *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ, BDB 396, KB 393) արտացոլում է Սաղմ.29:1-2, որտեղ հրեշտակները փառաբանում են ՅԱՀՎԵԻՆ: Սա վերաբերում է երկրի բոլոր մարդկանց: Միաստվածության ենթատեքստը տիեզերական է, ոչ թե ազգային:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

96:8 «Նրա անվան փառքը» Անունը ներկայացնում է անձին (տես՝ Եսայի 42:8): Նա արժանի է փառքի և պատվի (այս տեքստում «փառք» բառի նշանակության համար տես՝ Սաղ.1:6): Այս հասկացությունը պարբերաբար կրկնվող թեմա է (տես՝ 1 Մնաց. 16:29, Սաղմ. 29:2, 66:2, 79:9):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓԱՌՔ (ՀԿ, kabod)

❖ Այս համարի երկրորդ տողն ունի ևս երկու *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ

1. ընծա՛ր բերեք – BDB 669, KB 724

2. մտե՛ք Նրա սրահները – BDB 97, KB 112

Առաջին պարբերության պես (Սաղմ. 96:1-6) սա էլ է վերաբերում տաճարի երկրպագությանը:

96:9 «պաշտեցե՛ք... վախեցի՛ր» Սրանք երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ են, որոնք կապված են տաճարի գործողությունների հետ:

1. պաշտեցե՛ք (բառացի՝ «խոնարհվեցե՛ք») – BDB 1005, KB 295, *Hithpael* կամ *Hishtaphel*, տես՝ Սաղմ. 29:2

2. վախեցի՛ր – BDB 296, KB 297, *Qal* տերմինը կարող է արտահայտել՝

ա. ցավի մեջ գալարում

բ. երկրպագության մեջ պարել (տես՝ Սաղմ. 96:8, տես՝ NEB և Դատ. 21:21)

գ. արի պտտում՝ ինչպես մարտում

դ. վախը՝

1) երկրի, Սաղմ. 97:4, 104:32, 114:7

2) մարդկ երկրպագուների, Սաղմ. 96:9 (այսինքն՝ ակնածանք ու հարգանք)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ

❖ **«սրբության գեղեցկությամբ»** Այս արտահայտությունը (BDB 214 ԿԱԶՄՈՒԹ-ՅԱՄԲ BDB 871) անհայտ է երբայերենում: Այն կարող է նշանակել՝

1. երկրպագությանը պատշաճ հանդերձներ (տես՝ 1 Մնաց. 16:29, 2 Մնաց. 20:21, Սաղմ. 29:2, 110:3)
2. ՏԻՐՈՋ գալստյանը վերաբերող համար (տես՝ Սաղմ. 96:13, TEV)

Միայն մի հավանական հստակեցում առաջին տարբերակի վերաբերյալ (այսինքն՝ երկրպագությանը պատշաճ հանդերձները): *Elilm* տերմինը (BDB 43) հազվադեպ երբայերեն բառ է: AB կարծում է, որ այն կապ ունի ուգարտական «ցասում» տերմինի հետ (էջ՝ 356, 358): Եթե այդպես է, ապա առկա է հակադրություն ՅԱՀՎԵԻ երկրպագուների հազնվելու (Սաղմ. 96:9) և հեթանոս կուռքերի հազնվելու (Սաղմ. 96:5) և նրանց երկրպագելու ասհազու ձևի միջև:

❖ **«ՏԵՐԸ թագավորում է»** Սա տարածված հռչակում է Սաղմոսներում (տես՝ Սաղմ. 93:1, 97:1, 99:1): Այն վերաբերում է ՅԱՀՎԵԻՆ որպես թագավոր ամբողջ ստեղծագործության վրա (տես՝ Սաղմ. 95:3-5): Նա թագավորում է հիմա (տես՝ Եսայի 52:7), սակայն թագավորությունը մրցակցության մեջ է: Մի օր Նրա թագավորությունը հստակ կհայտնվի՝ տես՝ Սաղմ. 96:13, Չաք. 14:9, Մատթ. 6:10, 1 Կորնթ. 15:25-28:

96:10 «աշխարհն էլ հաստատվելու է , որպեսզի չասանվի» Այս պարբերության մեջ այս արտահայտությունը չի վերաբերում սկզբնական ստեղծագործությանը (Ծննդոց 1-2), այլ նոր ստեղծագործությանը (Հայտնություն 21-22, 2 Պետրոս 3:4-7, 10-13): Այս աշխարհը ապակավել է մեղքով և ապստամբությամբ: Այն դեռևս կհարատևի, սակայն մշտապես չի մնա: Մենք ապրում ենք դաժան աշխարհում: Եթե Աստված չգործի, այս մոլորակը չի կարող գոյատևել:

❖ **«Նա դատելու է ժողովուրդներին»** Գոյություն ունի միայն մեկ Աստված: Նա արդար, բարոյական, ուխտ կապող Աստված է: Բոլոր մարդիկ Նրան են հաշիվ տալու (տես՝ Ծննդ. 18:25, Սաղմ. 9:8, 58:11, 67:4, 94:2, 98:9, Մատթ. 25:31-46, Հայտն. 20:11-15):

<p>NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 96:11-13</p> <p>¹¹Երկինքները թող ուրախանան, ու երկիրը ցնձա, Ծովն իր լիությամբ թող գոռա՛:</p> <p>¹²Դաշտն ու նրա մեջ բոլոր եղողները թող ուրախանան . Այն ժամանակ անտառի բոլոր ծառերը կցնձան</p> <p>¹³ՏԻՐԱԶ առջև, քանի որ գալու է, Քանի որ գալու է երկիրը դատելու . Նա դատելու է աշխարհն արդարությամբ Ու ժողովուրդներին՝ Իր ճշմարտությամբ:</p>
--

96:11-12 Ամբողջ ստեղծագործությունը ցնձում է (անձնավորում) արարչի գալստյան շուրջ (այսինքն՝ Սաղմ. 103:19-22, 145:10, Եսայի 49:13, Հռոմ. 8:19-22):

- Ուշադրություն դարձրե՛ք բոլոր ՀԱՅՅԱԿԱՆՆԵՐԻՆ՝
1. երկինքները թող ուրախանան – BDB 970, KB 1333, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով. «երկինքներ» բառի համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆԶ:
 2. երկիրը թող ցնձա – BDB 162, KB 189, *Qal* ՀԱՅՅԱԿԱՆ. «երկինք» և «երկիր» բառերի կիրառությունը դարձվածքային կերպ է ամբողջ ստեղծագործությանը կոչ անելու Աստծուն փառաբանելու համար (տես՝ Ծննդ. 1:1):
 3. ծովը թող գոռա – BDB 947, KB 1266, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով. հիշե՛ք, որ ծովը կարող է ներկայացնել՝
ա . սկզբնական քառասային ՀՄԱ-յի աստվածներին (տես՝ Սաղմ. 89:9-10, 93:3-4)

բ. երեք մասից բաղկացած ստեղծագործություն (այսինքն՝ «երկինքները», «երկիրը» և «ծովը», տես՝ Ամովս 9:6, Անգ. 2:6, տես՝ NIDOTTE, հատոր 2, էջ՝ 463-465):

4. թող դաշտն ուրախանա – BDB 759, KB 831, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱ իմաստով
5. թող ծառերը ցնծան – BDB 943, KB 1247, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով

96:13 «Նա գալու է» Այս արտահայտությունը (BDB 97, KB 112, *Qal* ԴԵՐԲԱՅ) կրկնվում է շեշտադրության համար: ՅԱՀՎԵՆ վերադառնում է Իր ստեղծագործության մոտ որպես Դատավոր: Ինչ որ իմաստով ՅԱՀՎԵՆ միշտ Իր ստեղծագործության հետ է: Մի օր Նա հստակ հայտնելու է Իր ներկայությունը Իր ստեղծագործությանը: Ստեղծագործությունը աշխուժանում և ուրախանում է Նրա ներկայությունից: Նա գալիս է՝

1. օրհնության համար
2. դատաստանի համար (այստեղ)

❖ **«արդարությամբ... ճշմարտությամբ»** Սրանք գուգահեռաբար փոխկապակցված են: Աստված ճշմարիտ է և հավատարիմ: Նա ամեն ինչ կշռելի: Այս հասկացությունը նաև նշվում է Սաղմ. 96:10գ-ում (այսինքն՝ արդարամտությունը, տես՝ Սաղմ. 75:2, 98:9):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎՍՏԱՀԵԼԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս է այս Սաղմոսը համապատասխանում թե՛ նոր և թե՛ հին ուխտերին:
2. Թվարկե՛ք այս Սաղմոսի տիեզերական տարրերը: Ո՞րն է դրանց ենթատեքստը:
3. Ինչո՞ւ է բնությունը ցնծում ՅԱՀՎԵԻ գալստյամբ:
4. Ինչպե՞ս է դատաստանը ուրախության օր: